ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճանը հայցող Էմիլ Հրաչյայի Օրդուխանյանի «Քաղաքական մշակույթի էվոլյուցիան Հայաստանի Հանրապետության քաղաքական գործընթացներում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ժամանակակից հասարակական գիտություններում քաղաքական մշակույթի կայացման նախադրյալների համեմատական ուսումնասիրության անհրաժեշտությունն ու կարևորությունը պայմանավորված է նրանով, որ քաղաքական մշակույթը սոցիալ-քաղաքական համակարգի կառուցվածքային-գործառական առանցքային տարրերից մեկն է, որը ոչ միայն ապահովում է դրա կայունությունը, այլև սահմանում է դրանում տեղի ունեցող փոփոխությունների բնույթն ու տրամաբանությունը: Ժամանակակից Հայաստանում այս թեմայի նկատմամբ բավականին լայն հետաքրքրությունը նախևառաջ պայմանավորված է նրանով, որպեսզի փորձենք հասկանալ և համարժեքորեն գնահատել այն ազդեցությունը, որն ունեցել են և շարունակում են ունենալ քաղաքական մշակույթն ու քաղաքական-մշակութային ավանդույթները՝ քաղաքական գործընթացների բնույթի և մեր երկրի կայուն զարգացման վրա: Քաղաքական մշակույթի հայեցակարգի հետագա զարգացումը կարևոր է մեզանում քաղաքացիական սոցիալականացման և մասնակցության ռազմավարության մշակման խնդիրների լուծման համար:

Ներկայացված աշխատանքում հեղինակը փորձ է կատարել ուսումնասիրելու հետևյալ հիմնահարցերը՝ քաղաքական մշակույթի և քաղաքական գործընթացի տեսական և մեթոդաբանական հիմքերը, քաղաքական խոսույթի հաղորդակցային և վարչակարգային առանձնահատկությունները, ինչպես նաև քաղաքական մշակույթի խոսութային չափման խոսութային չափման հիմնախնդիրները: Այս համատեքստում

հեղինակն ուշադրություն է դարձրել քաղաքական մշակույթի և կայունության առանձնահատկություններին հետխորհրդային ինտեգրման և ժողովրդավարացման գործընթացներում՝ մեկնաբանելով քաղաքական գործընթացի արդյունավետացման հիմնախնդիրները ՀՀ-ում: Ընդ որում՝ ընտրական գործընթացի և ընտրական ինստիտուտի արդյունավետության խնդիրների համատեքստում, հեղինակը դիտարկել է ակտիվ քաղաքական մշակույթի ձևավորման խոչընդոտները ՀՀ-ում: Ուշագրավ է, որ քաղաքական մշակույթի ձևավորման նախադրյալների տեսանկյունից, հեղինակը փորձել է դիտարկել նաև ՀՀ քաղաքական վարչակարգի գնահատման, խորհրդարանական քաղաքական մշակույթի կայացման, «թավշյա» հեղափոխության քաղաքական մասնակցության հիմնախնդիրները:

Սույն աշխատանքի ներածությունում հեղինակը որոշակիորեն ներկայացրել է թեմայի արդիականությունը, գիտական մշակվածության աստիճանը, օբյեկտը և առարկան, նպատակներն ու խնդիրները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը: Իսկ դոկտորական ատենախոսության եզրակացությունում հեղինակը շարադրել է մի շարք գաղափարներ:

Հիմնվելով վերոհիշյալ մոտեցումների և պաշտպանության ներկայացված հիմնական դրույթների վրա՝ ցանկանում եմ ներկայացնել հետևյալ դիտողությունները.

1. Եթե ուսումնասիրության թեման վերաբերում է քաղաքական մշակույթի էվոլյուցիային ՀՀ քաղաքական գործընթացներում, ապա անհասկանալի է, թե ինչու՞ է հեղինակը հետազոտության նպատակը ձևակերպել հետևյալ կերպ. *«հետխորհրդային շրջանում Հայաստանի Հանրապետությունում քաղաքական գործընթացների համալիր ուսումնասիրության և քաղաքական խոսույթի վերլուծության միջոցով քաղաքական մշակույթի էվոլյուցիայի՝ ձևավորման, առանձնահատկությունների, արդի վիճակի,*

փոխակերպումների և զարգացման միտումների բացահայտումն է՝ նաև նոր մեթոդի կիրառությամբ» (էջ 10):

2. Անընդունելի է և գիտական չէ ատենախոսության հետազոտության նպատակի իրագործման համար հեղինակի կողմից առաջադրված ընդհանուր թվով 14 խնդիրները, որոնք, ի թիվս քաղաքական մշակույթի այլ հարցերի, ներառում են նաև *քաղաքական գործընթացը, քաղաքական խոսույթը, քաղաքական հաղորդակցությունը, վարչակարգը, հետխորհրդային ինտեգրման և ժողովրդավարացման գործընթացները, քաղաքական կայունությունը, ընտրական գործընթացը և ընտրական ինստիտուտը, խորհրդարանական քաղաքական մշակույթը և «թավշյա» հեղափոխությունը* (էջ 10-12):
3. Վիճահարույց են հետազոտության հիմնական արդյունքները և դրանց գիտական նորույթի քաղաքագիտական չափումները (էջ 13-18): Դրանք նկարագրողական են և հակասական, իսկ ատենախոսության հետագա շարադրանքում չի բացահայտվում հեղինակի դիրքորոշումը: *Օրինակ՝ «բոլոր հասարակություններում առկա միակ համընդհանուր տարրը քաղաքական խոսույթն է, որը կարող է հիմք ծառայել քաղաքական մշակույթի առավել ամբողջական հետազոտության համար՝ որպես նոր ուղղություն»* (էջ 13-14): Փաստորեն, հեղինակը սահմանափակում է քաղաքական մշակույթը՝ այն հանգեցնելով քաղաքական խոսույթի:
4. Ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակը հիմնավորեր թե ինչպե՞ս է իրեն, մի կողմից, հաջողվել «բացահայտվել են հետխորհրդային ինտեգրման և ժողովրդավարացման գործընթացներում քաղաքական մշակույթի առանձնահատկությունները», իսկ մյուս կողմից՝ «հիմնավորվել է հարավ-կովկասյան բազմական հասարակությունների դեպքերում քաղաքական կայունության ապահովման հնարավորությունը կոնսոցիատիվ մոտեցման միջոցով» (էջ 14):

5. Քաղաքական մշակույթի մասին հեղինակի ներկայացված սահմանումը հանրահայտ է հասարակագիտական գրականության մեջ, իսկ մյուս կողմից նկատելի է, որ հեղինակը հերթական անգամ սահմանափակել է քաղաքական մշակույթի մասին մոտեցումները (էջ 15):
6. Հեղինակի կողմից առաջադրված «քաղաքական մշակույթի խոսութային չափման մեթոդը» հասարակագիտական հետազոտություններում համատարած կիրառվող խոսութային (դիսկուրս) վերլուծությունն է (էջ 16):
7. Անհասկանալի է, թե ինչպե՞ս է հեղինակը «քաղաքական մշակույթի, քաղաքական գործընթացի և քաղաքական խոսույթի՝ որպես իրար փոխլրացնող քաղաքագիտական գիտակարգերի սինթեզի հիման վրա» ձևավորում չափման գործիք, որն էլ իր հերթին հեղինակին «հնարավորություն է տալիս առավել մանրամասն և համալիր կերպով հետազոտել քաղաքական մշակույթը և քաղաքական վարչակարգը» (էջ 16): Ընդ որում, այդպես էլ չի բացահայտվում, թե ինչպե՞ս է հեղինակը հնարավոր համարում «իրար փոխլրացնող քաղաքագիտական գիտակարգերի սինթեզ»-ը (էջ 16):
8. Անհասկանալի է, թե ինչպես է հեղինակը «բացահայտվել է քաղաքական մշակույթի, քաղաքական գործընթացի և քաղաքական խոսույթի միջև փոխկապակցվածության, փոխկախվածության բնույթը...», երբ դա հանրահայտ իրողություն է[1]:
9. Անհամեմատ թերի են այն գաղափարները, որոնք հեղինակը շարադրել է ատենախոսության երրորդ գլխի երկորդ ենթագլխում և հինգերորդ գլխի չորրորդ ենթագլխում: Քանի որ հեղինակը ներկայացրել է հանրահայտ

[1]Кожемякина В. А., О некоторых методах анализа политического дискурса // Методы социолингвистических исследований. М.,1995, Пешо М., Контент-анализ и теория дискурса // Квадратура смысла: французская школа анализа дискурса / пер. с фр. и португ.; общ. ред. и вступ. ст. П. Серио. М.,1999, էջ 302-336, Макаров М. Л., Основы теории дискурса. М.,2003, Рядовая Н. С., Аргументативные стратегии политического дискурса как объект лингвистического анализа // Вопросы филологии, 2012, №2 (41), էջ 114-121 և ուրիշներ:

հետազոտողների մտքեր՝ շարադրելով նկարագրողական բնույթի տեքստ: Օրինակ, երբ հեղինակն արձանագրում է, որ *«Ադրբեջանը և Վրաստանը, լինելով բազմական հասարակական կառուցվածք ունեցող պետություններ, քաղաքացիական մշակույթի ձևավորման և ժողովրդավարացման գործում ունեն զգալի դժվարություններ»*, ապա ավելացնում է, որ *«կոնսոցիատիվ խոսույթի գործադրումն այս պետություններում կարող է կարևոր գործոն դառնալ ժողովրդավարացման հաջող ընթացք ապահովելու համար»* (էջ 154): Այունահետև շարունակում է՝ նշելով, որ *«այսպիսի խոսույթը կարող է նաև նպաստել հասարակության տարբեր սեգմենտների միջև առկա սոցիալական կոնֆլիկտների հաղթահարմանը, որի դեպքում քաղաքացիական մշակույթի ձևավորման հեռանկարը կդառնա ավելի իրատեսական՝ դրանով իսկ մյուս էթնիկ սեգմենտների համար ստեղծելով ինքնության անվտանգության հավելյալ երաշխիքներ»* (էջ 154): Անհասկանալի է թե ինչպե՞ս է դա հնարավոր Ադրբեջանի և Վրաստանի քաղաքական համակարգերի և վարչակարգերի պայմաններում, քանի որ այդ պարբերությունից անմիջապես հետո հեղինակը սկսում է քննարկել «էթնոկրատիան որպես ժողովրդավարության խոչընդոտ» (էջ 155) և «էթնիկ ժողովրդավարության» հարցերը (էջ 158): Իսկ այնուհետև հեղինակն արձանագրում է. *«Այսպիսով՝ Ադրբեջանում և Վրաստանում որոշակի տարբերություններով հաստատված էթնոկրատական և էթնիկ ժողովրդավարության մոդելների պարագայում ոչ գերակա էթնիկ խմբերի շահերը դե ֆակտո ճնշվում են գերակա էթնիկ խմբերի կողմից»* (էջ 162): Իսկ ինչ վերաբերում «թավշյա» հեղափոխությունը մասնակցային մշակույթի դրսևորումներին, ապա անհասկանալի է թե ինչու՞ է հեղինակը քննարկում նման հիմնախնդիր, երբ *«...դեռ վաղ է հստակ գնահատականներ տալ, քանի որ տվյալ քաղաքական գործընթացը դեռ չի ավարտվել, իսկ գնահատումը սովորաբար քաղաքական գործընթացի*

վերջին փուլն է» (էջ 328): Արդո՞ք քաղաքագիտական է 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցած ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխության համատեքստում դիտարկել սենտիմենտալ քաղաքականության, սենտիմենտալ հռետորաբանության կամ էլ սենտիմենտալիզմի մասին հարցեր: Կարծում է հեղինակը գոնե պետք է քննարկեր 2018 թ.-ի ՀՀ կառավարության ծրագիրն ու 2019 թ.-ի այդ ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցը[2], ինչպես նաև՝ 2019 թ.-ի ՀՀ կառավարության ծրագիրն ու 2020 թ.-ի այդ ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցը[3]:

10. Ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակն իր համեմատական ուսումնասիրերություններում օգտագործեր նաև ժողովրդավարության մակարդակի և քաղաքական համակարգի կայունության ինդեքսները[4]:
11. Անհասկանալի է նաև ատենախոսության եզրակացությունները, որոնցից այդպես էլ պարզ չի դառնում հեղինակային մոտեցումն ու եզրահանգումները, քանի որ դրանք հանրահայտ մտքեր են և դրանցում բացակայում են հեղինակի նորարարական մոտեցումները (էջ 331-347):

---

[2] «ՀՀ կառավարության ծրագիր» (Հավելված ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581 - Ա որոշման) // https://www.gov.am/files/docs/2782.pdf, «Զեկույց ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581-ա որոշմամբ հավանության արժանացած՝ ՀՀ Կառավարության ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին» // https://www.gov.am/files/docs/3188.pdf:

[3] «ՀՀ կառավարության ծրագիր» (Հավելված ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման) // https://www.gov.am/files/docs/3133.pdf, «Զեկույց ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-ա որոշմամբ հավանության արժանացած՝ ՀՀ կառավարության ծրագրի 2019 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին» // https://www.gov.am/files/docs/3932.pdf:

[4] Political Stability of Newly Independent Countries under Conditions of Modernization (Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine and Moldova) ed. by Arusyak Aleksanyan, Yerevan, 2018, Trends of the Index of Democracy Level in the dimension of human rights and democratization edited by Arusyak Aleksanyan, Yerevan,2017, Comparative Analysis of the Index of Democracy Level in the context of Human Rights and Democratization (Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine and Moldova) Ed. by Arusyak Aleksanyan, Yerevan,2016, Comparative Analysis of the Index of Democracy Level: Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Ukraine and Moldova ed. by Arusyak Aleksanyan, Yerevan, 2015.

Ելնելով վերոշարադրյալից, գտնում եմ, որ **Էմիլ Հրաչյայի Օրդուխանյանի «Քաղաքական մշակույթի էվոլյուցիան Հայաստանի Հանրապետության քաղաքական գործընթացներում»** թեմայով՝ ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ, քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը չի համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 8-րդ կետի պահանջներին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի դոցենտ, քաղ. գիտ. դոկտոր՝ **Աշոտ Ալեքսանյան**

Քաղ. գիտ. դոկտ., դոց. Ա. Ս. Ալեքսանյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար,
պատմ. գիտ. թեկնածու՝ Լ. Ս. Հովսեփյան

ք. Երևան, « » հուլիսի 2020 թ.